

## Շամլուղ

Մակերես՝ 3,6կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 800

Նախկին քաղաքային համայնք Ալավերդու տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 69կմ հեռավորության վրա՝ Վանաձոր-Թբիլիսի ավտամայրուղուց 6-7կմ արեւմուտք: Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Շամլուղ քաղաքը, Ախթալա եւ Բենդիկ գյուղերը: Շամլուղը սկզբում եղել է գյուղ, իսկ 1938 թ-ից դարձել է քաղաքատիպ ավան, 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո այն դասվել է Հայաստանի քաղաքների շարքին: Նախկինում մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գաբառի մեջ եւ ունեցել է Շամլուգ, Շամբլուղ, Շամբլուղ, Շամլուգ անվանումները: Պղնձարդյունաբերությունը բավական աշխուժացել է 18-րդ դարում, երբ Գյումուշխանեից այստեղ են եկել հույն հանքագործներ եւ 1770 թ-ին պղնձահումքի բազայի վրա կառուցվել է Շամլուղի պղնձածուլական գործարանը: Զաղաքի տարածքում պահպանվել են մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների դամբարաններ, 13-րդ դարի խաչածրաններ, գյուղատեղիներ: Բենդիկ գյուղը մինչեւ 1995 թ-ի վարչատարածային ռեֆորմը եղել է բնակչության ավան, ապա դասվել է Հայաստանի գյուղական բնակավայրերի շարքին: Ծովի մակարդակից տեղադրված է 1100մ բարձրության վրա: Շամլուղ քաղաքից գտնվում է 2կմ հեռավորության վրա: Ախթալա գյուղը (Վերին Ախթալա) Շամլուղից գտնվում է 4կմ հեռավորության վրա, սա ավելի բարձրադիր է եւ գտնվում է ծովի մակարդակից 1375մ բարձրության վրա: Տեղադրված է Դեբեդ գետի ափին, հարթավայրում՝ ծովի մակարդակից 810մ բարձրության վրա: Շրջակայքում կան կավի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն եւ արդյունահանվում են: Համայնքի կլիման մերձարեւադարձային է, չափավոր շոգ եւ չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Տարեկան թափվում են 500-600մմ մթնոլորտային տեղումներ: Ազրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներ են: Նախկինում համայնքի մեջ մտնող գյուղական բնակավայրերում մեծ տեսակարար կշիռ են ունեցել հույները եւ ադրբեջանցիները: 1988-1989թթ հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին տեղի ադրբեջանցիները տեղափոխվել են Ադրբեջանի Հանրապետություն: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2005 թ-ին Շամլուղ քաղաքն ունեցել է 800 բնակիչ: Համայնքում սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 23%, աշխատունակները 53% հետաշխատունակները 24%: Համայնքում կան հանրակրթական դպրոցներ, գրադարաններ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը արդյունաբերությունն է, որի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի ծանր արդյունաբերությունը: Այստեղ կառուցված է Շամլուղի պղնձածուլական գործարանը: Համայնքում զբաղվում են գյուղատնտեսությամբ: Շամլուղի հողային ֆոնդի 48% կազմում են բնակավայրի եւ տնամերձ հողերը: Գյուղական բակավայրերում գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ՝ կաթնամսատու ուղղությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելի է ներքաղաքային ճանապարհների վերանորոգումը, դպրոցի եւ դպրոցական գույքի վերանորոգումը, ոռոգման եւ խմելու ջրի ջրագծերի, փողոցների գիշերային լուսավորության հարցը: Առաջնային են համարվում նաեւ մշակութային կոթողների վերանորոգումը, արդյունաբերության վերականգնումը:

